

Հաստատված է՝
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 19.09.2016թ. թիվ 405-Լ
որոշմամբ

Արա Ջոհրաբյան

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրահանգը սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ ՀՀ փաստաբանների պալատ) հանրային պաշտպանի գրասենյակում (այսուհետ՝ նաև ՀՊԳ) առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման (այսուհետ՝ **աշխատանքի արդյունավետության գնահատման**) չափորոշիչները, գնահատման ընթացակարգը և գնահատման հանձնաժողովի՝ ի պաշտոնե կազմը:

II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

2. Հանրային պաշտպանի աշխատանքի արդյունավետության գնահատման համար հաշվետու ժամանակահատվածի կտրվածքով հաշվի են առնվում հետևյալ երեք խումբ չափորոշիչները՝

1) ընդհանուր չափորոշիչներ.

2) վարույթն իրականացնող մարմինների նախաձեռնությամբ նշանակված հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչներ.

3) քաղաքացիների դիմումների հիման վրա նշանակված հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչներ:

3. Սույն հրահանգի 2-րդ կետում նշված չափորոշիչները սահմանված են սույն հրահանգի համապատասխանաբար հավելված 1-ում, հավելված 2-ում և հավելված 3-ում (**այսուհետ՝ Հավելվածներ**):¹

III. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

4. Գնահատման գործընթացը կազմակերպում է սույն հրահանգի V-րդ գլխով նախատեսված գնահատման հանձնաժողովը (**այսուհետ՝ Գնահատման հանձնաժողով**):

5. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կամ ղեկավարի տեղակալներից մեկը ոչ ուշ քան մինչև **ընթացիկ տարվա նոյեմբերի 5-ը** Գնահատման հանձնաժողովի նախագահին է ներկայացնում յուրաքանչյուր հանրային պաշտպանի կողմից հաշվետու ժամանակահատվածում՝ **հունվարի 1-ից առ նոյեմբերի 1-ը**, իսկ քաղաքացիական մասնագիտացման այն հանրային պաշտպանների համար, որոնք աշխատել են նաև նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, **նախորդ տարվա նոյեմբերի 1-ից առ ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը (այսուհետ՝ Հաշվետու ժամանակահատված)** կատարված աշխատանքի՝ Հավելված 2-ին և Հավելված 3-ին համապատասխան լրացված նախնական գնահատման վերաբերյալ ամփոփաթերթեր (**այսուհետ՝ նաև Ամփոփաթերթեր**):

(կետր լիտիսկվել է 08.10.2020թ. թիվ 360-Լ որոշմամբ)

6. Ամփոփաթերթերը կազմվում են հանրային պաշտպանների կողմից «Հանրային պաշտպանի գրասենյակ» էլեկտրոնային ծրագրում (այսուհետ՝ էլեկտրոնային ծրագիր) մուտքագրված տվյալների հիման վրա: Մուտքագրված տվյալների հավաստիությունը ստուգելու, ինչպես նաև տեխնիկական և մուտքագրման ժամանակ թույլ տրված մեխանիկական սխալները բացառելու նպատակով Ամփոփաթերթերը, նախքան Գնահատման հանձնաժողովին ներկայացնելը, հնարավորության դեպքում, ներկայացվում են (առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով) հանրային պաշտպաններին:

7. Հանրային պաշտպանն, ստանալով Ամփոփաթերթը, պարտավոր է ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել (առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով) իր առաջարկությունը, եթե համաձայն չէ ներկայացված տվյալների հետ: Հանրային պաշտպանն առաջարկությանը կից պետք է ներկայացնի համապատասխան հիմնավորող փաստաթղթեր: Հանրային պաշտպանի կողմից սահմանված ժամկետում ստացված առաջարկության հիման վրա Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կամ ղեկավարի տեղակալը

¹ Վերաքննիչ և (կամ) վճռաբեկ դատարաններում այլ հանրային պաշտպանի բողոքի հիման վրա ներկայացուցչություն իրականացանող հանրային պաշտպանին տրամադրվում է հավելված 2-ով և հավելված 3-ով սահմանված միավորի մեկ երկրորդ չափով միավոր, իսկ տվյալ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը կազմած հանրային պաշտպանին տրվում է նշված հավելվածներով սահմանված միավորը: Նշված միավորները ամփոփվում են ըստ «Հանրային պաշտպանի գրասենյակ» էլեկտրոնային ծրագրի՝ հատուկ սյունակներում արդյունքներ և դրանց տրվող միավորներ հաշվարկելով:

ամփոփաթերթում կատարում է փոփոխություն կամ գրավոր մերժում է հանրային պաշտպանի առաջարկությունը: Հանրային պաշտպանի առաջարկությունները և/կամ մերժման դիրքորոշումները կցվում են հանրային պաշտպանների վերաբերյալ կազմված ամփոփաթերթերին:

8. Մինչև նոյեմբերի 5-ը Գնահատման հանձնաժողովի նախագահը՝

1) ՀՀ փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով և կարգապահական գործերի համակարգողներից ստանում է համապատասխանաբար՝ հանրային պաշտպանների կողմից ընթացիկ տարում վերապատրաստում անցած լինելու մասին և հանրային պաշտպաններին ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից կարգապահական տույժի ենթարկված լինելու մասին տեղեկություններ:

2) ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուներից ստանում է հանրային պաշտպանների կողմից Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով նախատեսված փաստաբանական վարույթներին վերաբերվող, ինչպես նաև Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումների կատարման ընթացքը կազմակերպելու մասին կարգի պահանջների խախտումների վերաբերյալ տեղեկանքները (ակտերը), ինչպես նաև էլեկտրոնային ծրագրում մուտքագրված տվյալների և փաստացի ստուգման արդյունքում հայտնաբերված տվյալների անհամապատասխանության վերաբերյալ տեղեկանքները (ակտերը):

Սույն կետում նշված տեղեկատվությունն այն հանրային պաշտպանների վերաբերյալ, որոնք աշխատել են նաև նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, ներառում է նաև այդ ամիսները:

(կեդր լրացվել է 08.10.2020թ. թիվ 360-L որոշմամբ)

9. Գնահատման հանձնաժողովը, հաշվի առնելով Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կամ ղեկավարի առաջին տեղակալի ներկայացրած տեղեկություններն առկա թափուր հաստիքների քանակի, «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի **(այսուհետ՝ Կարգ)** 1.4. կետում նախատեսված թեկնածությունների ցուցակում հանրային պաշտպանի թեկնածուների քանակի, մարզերի դեպքում՝ նաև տվյալ տարածքը հանրային պաշտպանով ապահովելու և այլ հանգամանքները, **սահմանում է հանրային պաշտպանների**, բացառությամբ կես կամ մեկ քառորդ հաստիքներ զբաղեցնող հանրային պաշտպանների, **այն թիվը (քանակը կամ տոկոսը, այսուհետ՝ Անցողիկ թիվ)**, որոնց հետ առանց մրցույթի անցկացման՝ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը կարող է երկարաձգվել ևս մեկ տարով: Ընդ որում, նշված թիվը չի կարող պակաս լինել **Կարգի** 5.4. կետով նախատեսված՝ հանրային պաշտպանների ընդհանուր թվի առնվազն 30 (երեսուն) տոկոսից: Անցողիկ թիվը սահմանվում է սույն հրահանգի 15-րդ կետում նշված յուրաքանչյուր ցանկի համար: Գնահատման հանձնաժողովի նախագահը սույն կետում նշված գնահատման հանձնաժողովի որոշումը ներկայացնում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին: ՀՀ փաստաբանների պալատի

նախագահի կողմից երկու աշխատանքային օրվա ընթացքում, գնահատման հանձնաժողովի սահմանած Անցողիկ թիվը չփոփոխելու դեպքում, այն համարվում է ուժի մեջ մտած:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված՝ կես կամ մեկ քառորդ հաստիքներ զբաղեցնող հանրային պաշտպանների հետ պայմանագրեր երկարաձգելու հարցը լուծվում է սույն հրահանգի 13.1 կետով սահմանված կարգով:

(կեպը փոփոխվել է 08.10.2020թ. թիվ 360-L որոշմամբ)

IV. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Գնահատման հանձնաժողովը գնահատումն իրականացնում և գնահատման արդյունքները ՀՀ փաստաբանների պալատի նախագահին է ներկայացնում **մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 10-ը**²՝ Կարգով նախատեսված մրցույթները կազմակերպելու համար:

11. Գնահատման հանձնաժողովը գնահատումն իրականացնում է նիստերի միջոցով: Գնահատման հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է գնահատման հանձնաժողովի առնվազն չորս անդամ:

12. Գնահատման հանձնաժողովը յուրաքանչյուր հանրային պաշտպանի մասով գնահատումն իրականացնում է առանձին: Անհրաժեշտության դեպքում գնահատման հանձնաժողովը կարող է գնահատման ժամանակ նիստին հրավիրել գնահատվող հանրային պաշտպանին: Գնահատմանը հրավիրված հանրային պաշտպանի չներկայանալը արգելք չէ գնահատման հանձնաժողովի կողմից գնահատումը հանրային պաշտպանի բացակայությամբ իրականացնելու համար:

13. Յուրաքանչյուր հանրային պաշտպանի աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է հետևյալ հիմնական բանաձևով՝

$$\text{ՀՊ ԸՄ}^2 = \frac{\text{ՎՆ} + \text{ՔԴ} + \text{ԼՄ}^3}{\text{ԱԱՔ}} \times 10 - \text{ԸԶ}$$

որտեղ՝

ա) **ՎՆ**-ն (վարույթն իրականացնող մարմինների նախաձեռնությամբ նշանակված հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչներ) հավելված 2-ում նշված միավորների հանրագումարն է:

բ) **ՔԴ**-ն (քաղաքացիների դիմումների հիման վրա նշանակված հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչներ) հավելված 3-ում նշված միավորների հանրագումարն է:

² հանրային պաշտպանին տրվող ընդհանուր միավորը

³ առկայության դեպքում

Ընդ որում, քաղաքացիական մասնագիտացման հանրային պաշտպանների համար հավելված 3-ում նշված միավորները հաշվարկվում է միայն Հաշվետու ժամանակահատվածում ստացած հանձնարարությունների գործերով:

գ) **ԼՄ**-ն (*լրացուցիչ միավորներ*) հանրային պաշտպանին Գնահատման հանձնաժողովի կողմից տրվող լրացուցիչ միավորներ (գործակիցներ) են՝ ՎՆ-ի և ՔԴ-ի հանրագումարի մինչև 30 (երեսուն) տոկոսի չափով:

ԼՄ-ն կարող է տրամադրվել Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկով, հաշվի առնելով առանձին գործերի բարդությունն ու ծավալը, հանրային պաշտպանի կողմից դրսևորված առանձնակի ջանասիրությունը, արձանագրված արդյունքներով հանրային պաշտպանի կողմից կազմված դատավարական և այլ փաստաթղթերի և կատարված գործողությունների որակն ու բարդությունը, ինչպես նաև այլ հանգամանքներ: Նշված առաջարկը Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը ներկայացնում է գրավոր՝ նշելով տվյալներ կոնկրետ գործով հանրային պաշտպանի կատարած աշխատանքի վերաբերյալ և կցելով համապատասխան դատավարական և այլ փաստաթղթերի պատճեններն ու այլ հիմնավորող փաստաթղթեր:

ԼՄ-ն կարող է տրամադրվել նաև Գնահատման հանձնաժողովի նախագահի՝ Գնահատման հանձնաժողովի նիստի ընթացքում ներկայացրած բանավոր առաջարկով՝ հիմք ընդունելով գնահատման արդարացիությունն ապահովելու անհրաժեշտությունը, հանրային պաշտպանների զեկուցագրերում ներկայացրած հանգամանքները, «Հանրային պաշտպանի գրասենյակ» էլեկտրոնային ծրագրում առկա տվյալները, հանրամատչելի կամ այլ՝ օբյեկտիվորեն հիմնավորվող փաստեր:

դ) **ԱԱԲ**-ն (*աշխատած ամիսների քանակը*) Հաշվետու ժամանակահատվածում հանրային պաշտպանի աշխատած ամիսների քանակն է ամբողջ թվերով (առանց մոտարկման):

ե) **ԸԶ**-ն (*ընդհանուր չափորոշիչները*) հավելված 1-ում նշված նվազեցվող միավորների հանրագումարն է:

(կեփը փոփոխվել է 08.10.2020թ. թիվ 360-Լ որոշմամբ)

13.1 Մարզում կես կամ մեկ քառորդ հաստիքի զբաղեցնող հանրային պաշտպանի կատարած աշխատանքի գնահատում չի կատարվում և վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության հարցը լուծում է Գնահատման հանձնաժողովը՝ հաշվի առնելով Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկը և սույն հրահանգի 9-րդ կետով սահմանված հանգամանքները:

(կեփը փոփոխվել է 08.10.2020թ. թիվ 360-Լ որոշմամբ)

13.2. **(կեփն ուժը կորցրել է 08.10.2020թ. թիվ 360-Լ որոշմամբ)**

13.3. **(կեփն ուժը կորցրել է 08.10.2020թ. թիվ 360-Լ որոշմամբ)**

14. Հանրային պաշտպանի աշխատանքի գնահատումն ամփոփվում է համաձայն **Հավելված 4-ի**:

15. Գնահատման արդյունքներով, ըստ հանրային պաշտպանների աշխատանքների գնահատման վարկանիշային միավորների⁴, կազմվում են հետևյալ ցանկերը.

1) Երևան քաղաքի քրեական ուղղվածության հանրային պաշտպանների աշխատանքների արդյունավետության գնահատման ցանկ.

2) Երևան քաղաքի քաղաքացիական ուղղվածության հանրային պաշտպանների աշխատանքների արդյունավետության գնահատման ցանկ,

3) ըստ յուրաքանչյուր մարզի հանրային պաշտպանների աշխատանքների արդյունավետության գնահատման ցանկ (մասնագիտացումների դեպքում՝ նաև ըստ մասնագիտացումների):

16. Հանրային պաշտպանը, որը հաշվետու ժամանակահատվածում աշխատել է ոչ ավել, քան չորս ամիս, մեխանիկորեն համարվում է Անցողիկ միավոր ստացած, եթե նա այդ ժամանակահատվածում չի խախտել Հավելված 1-ի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված պահանջները: Հավելված 1-ի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված պահանջները խախտելու դեպքում հանրային պաշտպանը մասնակցում է հանրային պաշտպանի թեկնածուների համար անցկացվող մրցույթին ընդհանուր հիմունքերով:

Մեխանիկորեն Անցողիկ միավոր ստացած են համարվում նաև այն հանրային պաշտպանները, որոնք գնահատումն իրականացնելու ժամանակ գտնվում են զորահավաքային զինվորական ծառայության մեջ կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով մասնակցում են Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին:

(կետրը լրացվել է 30.10.2020թ. թիվ 374-Լ որոշմամբ)

17. Ցանկերից յուրաքանչյուրից Անցողիկ թվին համապատասխանող հանրային պաշտպանների վերաբերյալ տվյալներն ընդգրկվում են մեկ միասնական ցանկում (ազգանունների այբբենական կարգով)՝ կազմելով առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանների միասնական ցանկը: Միասնական ցանկը հաստատելու մասին գնահատման հանձնաժողովը կայացնում է որոշում:

18. Գնահատման հանձնաժողովը միասնական ցանկը հաստատելուց հետո երկու օրվա ընթացքում՝

1) յուրաքանչյուր հանրային պաշտպանի տեղեկացնում է իր՝ ա) գնահատման արդյունքների և բ) միասնական ցանկում ընդգրկված լինելու կամ ընդգրկված չլինելու մասին.

2) ցանկը ներկայացնում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ Անցողիկ թվին համապատասխանող հանրային

⁴ Գնահատման ցանկերում հանրային պաշտպանների թվարկումն իրականացվում է ըստ ստացած միավորների՝ առավելագույնից նվազագույն:

պաշտպանների հետ աշխատանքային պայմանագրերը 1 (մեկ) տարով երկարաձգելու նպատակով:

V. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Գնահատման հանձնաժողովը կազմված է 7 (յոթ) անդամներից՝ հանձնաժողովի նախագահից և հանձնաժողովի 6 (վեց) անդամներից:

20. Գնահատման հանձնաժողովի ի պաշտոնե կազմն է՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալը.

Գնահատման հանձնաժողովի անդամներ՝

2) ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարը,

3) Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը,

4) Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջին տեղակալը,

5) Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալը:

(կեպը փոփոխվել է 30.10.2019թ. թիվ 461-Լ, 08.10.2020թ. թիվ 360-Լ որոշումներով)

21. Գնահատման հանձնաժողովի՝ փաստաբանների կազմից **երկու փաստաբան անդամներին** (վերջիններիս համաձայնությամբ) նշանակում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահը:

22. Գնահատման հանձնաժողովի նիստերն արձանագրում և փաստաթղթերի նախագծերը կազմում է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալը:

23. Գնահատման հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) կամ որոշումները կարող են բողոքարկվել հանրային պաշտպանների կողմից՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ գործողության (անգործության) կամ որոշման մասին տեղյակ լինելու պահից երեք օրվա ընթացքում:

24. Գնահատման հանձնաժողովի գործողությունների (անգործության) կամ որոշումների դեմ բերված բողոքները քննության է առնում հինգօրյա ժամկետում և կայացնում է պատճառաբանված որոշում:

25. Գնահատման հանձնաժողովը կարող է հանրային պաշտպանին տալ սույն հրահանգի հրահանգի 13 կետում նշված լրացուցիչ միավորներ (ԼՄ) ՎՆ-ի և ԲԴ-ի հանրագումարի մինչև 60 (վաթսուն) տոկոսի չափով՝ հաշվի առնելով հասարակական հիմունքներով հանրային պաշտպանի ներգրավվածությունը Փաստաբանների պալատի ակումբում, հանձնաժողովում կամ աշխատանքային խմբում, եթե այդ մասնակցության մասով վերջինս ունեցել է էական ծանրաբեռնվածություն:

Գնահատման հանձնաժողովը կարող է հանրային պաշտպանին տալ սույն կետում նշված չափերով լրացուցիչ միավորներ նաև հետևյալ դեպքերում՝

1) գնահատումն իրականացնելու հաշվետու ժամանակահատվածում՝ առնվազն տասն աշխատանքային օրով գտնվել է զորահավաքային

զինվորական ծառայության մեջ կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով մասնակցել է Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին.

2) կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով հայտարարված արտակարգ դրության կամ կարանտինի պայմաններում առանձնակի շանասիրություն և բարեխղճություն ցուցաբերած հանրային պաշտպանին.

3) այն հանրային պաշտպանին, որի ընտանիքի անդամն առնվազն 10 աշխատանքային օր մասնակցել է, կամ գնահատման ժամանակ մասնակցում է Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին, ինչպես նաև նշված մարտական գործողություններին մասնակցելու կապակցությամբ վիրավորվել է, անհայտ կորել է, կամ զրհվել է:

Սույն կետի իմաստով հանրային պաշտպանի ընտանիքի անդամ է համարվում նրա ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:

(կետրը լրացվել է 30.10.2019թ. թիվ 461-L, 30.10.2020թ. թիվ 374-L, փոփոխվել է 08.10.2020թ. թիվ 360-L որոշումներով)

26. Գնահատման հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է գնահատման հանձնաժողովի աշխատանքները.

2) ստորագրում է գնահատման հանձնաժողովի փաստաթղթերը:

(կետրը լրացվել է 30.10.2019թ. թիվ 461-L որոշմամբ)